«Ղեւոնդն եմ ես վարդապետ երկասէր
Սիրահար նախնի մեր հարց մատենից
Շրջեցայ տքնեցայ ի հայրենի աշխարհ
Կարդացի կրկտեցի հին եւ նոր ձեռագիրս
Ոչ ափ յիշատակարանս ես ձեռամբս օրինակեցի
Ո՜հ զամէն ի մթան թողի ես եւ գնացի
Հայրիկ ձեզ յանձնեմ եւ կտակ թողում
Զերկոցս իմ վաստակ ի լոյս հա՛ն ի լոյս.»

«Երանի քեզ Ղեւոնդիէ.
Որ ծնար առ թեւօք Վարագայ Խաչին
Յերուսաղէմ ի Սիոնի գոգ հանգչեցար
Ո՜հ լռեց երգախօսիկ լեզուդ
Այլ ոչ երգես, Երանի տամ այն դարուն.
Մի՛ երկուանար, հոգի, կտակդ նուիրական է.
Զքեզ ելաց, զարձանագիրս յօդեց
Խրիմեան Հայրիկ»։

ՂԵՒՈՆԴ ՔՀ. ՏԷՐ ԱՒԵՏԻՍԵԱՆ, ՄՇԵՑԻ (Զրիկ գիւղ).— Աւազանի անունը Վարդան. Ծ. 1860 ին. աշկ. Ս. Յակոբի Ժառ. վարժ.ի (1874-1878). եւ հմտացած է ձայնագրական ուսման, վարած է ուսուցչական պաշտօններ զանազան գաւառներու մէջ, Զռ. քհ. 1892ին Դաւրէժի մէջ, երկու տարի վերջ Լիլաւա, յետոյ Շուամլա, 1909 ին դարձեալ Դաւրէժ, ուր կը մնայ մինչեւ 1923 և կը վախճանի նոյն տարին։ Իր գրական երկերն են. Խենթ Մշեցու խելացի խօսքեր. (Գ. տպ. 1921, Թաւրիզ)։ Տարերք Հայանական երաժշտութեան. Դպրի բաբայի կեանքի արկածներ (ձեռագիր). Ղեւոնդ քհ. ունեցած է նաեւ ԺԹ. դարուն Մշոյ մէջ պատահած պատմ. դէպքեր անուամբ գրութիւն մը՝ որ կորսուած է։ Ընդարձակ տեղեկութեանց համար տեսնել (Ղնդ. քհ.)։

ՂԵՒՈՆԴ ՔՀ. ՓԱՓԱՋԵԱՆ.— Ծ. 1847 ին. աշկ. Ժառ. վարժ.ի. գրաչար Ս. Յակոբի վանքի տպարանին մէջ Տնտեսեանի օրով 1874 ին։ Զռ. քհ. Տիմոթէքայի մէջ 1879 ին. մի և նոյն ժամանակ կատարելով տպարանական գործեր։ Յաջորդաբար քահանայագործած է Աղեքսանդրիա, Կալաց եւ Թուլչա։ Աղեքսանդրիոյ մէջ կը հրատարակէ Նեղոս պարբերականը. ունի նաև զանազան հրատարակութիւններ հայերէն և ռումանե-